



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հերագորության թեման՝ *Պրոբլեմային ուսուցման
մեթոդաբանությունը և կիրառումը քիմիա առարկայի
դասավանդման գործընթացում*

Առարկան՝ *Քիմիա*

Հերագորող ուսուցիչ՝ *Հասմիկ Լալազարյան*

Ուսումնական հաստատություն՝ *«Չարենցավանի N2
հիմնական դպրոց» ՊՈԱԿ*

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն -----	3-6 էջ
2. Պրորլեմային ուսուցումը՝ որպես ուսուցման գործընթացի կազմակերպման դիդակտիկական նոր համակարգ -----	7-8 էջ
3. Պրորլեմային ուսուցման տեխնոլոգիա -----	8-9 էջ
4. Պրորլեմային իրավիճակներ -----	9-11 էջ
5. Պրորլեմային ուսուցման հիմնական հասկացությունները -----	12 էջ
6. Պրորլեմային ուսուցման հատուկ գծեր -----	13 էջ
7. Պրորլեմային ուսուցման ֆունկցիաները -----	13-14 էջ
8. Պրորլեմային ուսուցման մակարդակները -----	14 էջ
9. Պրորլեմային դասերի պլանավորումը -----	15 -18 էջ
10. Եզրակացություն -----	19 էջ
11. Գրականություն -----	20 էջ

Ներածություն

Հետազոտության արդիականությունը: Այսօր միջին դպրոցում քիմիայի ուսուցման որակի բարձրացման գործընթացում բացի ավանդաբար կիրառվող մեթոդներից, ձևերից ու հնարներից կարևորվում է նաև պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը, որոնք կօգնեն լուծել ժամանակակից մանկավարժության առջև ծառայած խնդիրները: Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը կատարելագործվել և համապատասխանեցվել են արդի պահանջներին, հաջողությամբ շարունակվելու են կիրառվել միջին դպրոցի քիմիայի ուսուցման գործընթացում:

Կրթության բարեփոխումների գործընթացը, պրոբլեմային ուսուցման մեթոդաբանության կիրառումը կարևոր գործոն է կայուն գիտելիքների արմատավորման համար:

Մեր աշխատությունում քննարկվելու են մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման հնարավորությունները, տրվելու են ուսուցման հետաքրքրաշարժ առաջադրանքներ համակարգի կիրառման նպատակահարմարության հիմնավորումները, մեկնաբանվելու են ուսուցման նոր ու արդյունավետ միջոցներով ուսուցումը կազմակերպելու առավելությունները միջին դպրոցի քիմիայի դասերին:

Կրթության մասին Հայաստանի հանրապետության օրենքը սահմանում է, որ կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, նրանց ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը»:

Այսպիսով, հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից ուսուցումը և զարգացման շարժառիթները պահանջում են ուսումնական միջավայրի զարգացման նոր մոտեցումներ: Հանրակրթության բարեփոխումը և զարգացումը դարձել են անհրաժեշտ, որտեղ առաջնահերթ է

ուսուցման գործընթացի կատարելագործումը:

Հեղափոխության առարկան՝ քիմիա առարկայի դասավանդումն է:

Հեղափոխության օբյեկտը՝ պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը քիմիա առարկայի դասավանդման գործընթացում:

Հեղափոխության նպատակն է պարզել, թե որքանով են նպաստում պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը միջին դպրոցի իմացական գործունեության զարգացմանը:

Հեղափոխության խնդիրներն.

- մշակել ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք կնպաստեն ուսուցման արդյունավետության բարձրացմանը և աշակերտակենտրոն ուսուցման արմատավորմանը,
- ավանդաբար կիրառվող մեթոդներից, հնարներից ու եղանակներից առանձնացնել նրանք, որոնք կարող են արդյունավետ գործածվել պրոբլեմային ուսուցման մեթոդաբանության մեջ,
- ուսումնասիրել տեղեկատվական- հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը միջին դպրոցի քիմիայի դասերին:

Հեղափոխության մեթոդներն են.

ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ համապատասխան գրականության վերլուծում և համադրում, կարծիքների հավաքում, ընդհանրացում և ուսումնասիրում,

- դասի ընթացքում նոր և արդյունավետ մեթոդների, հնարների, ձևերի եղանակների փորձարկում,
- միջազգային փորձի ուսումնասիրում և տեղայնացում,
- ուսուցման ժամանակակից միջոցների օգտագործման հնարավորությունների բացահայտում;

Հեղափոխության գործնական նշանակությունը մեկնաբանվում է հետևյալ կերպ.

- աշակերտների մոտ ավելանում է հետաքրքրությունը ուսումնական գործընթացի նկատմամբ,
- ձևավորվում և զարգանում է դպրոցականների ստեղծագործական և տրամաբանական մտածողությունը,

- նպաստում է դպրոցականների ճանաչողական գործունեության ակտիվացմանը,
- աշակերտների մեջ ձևավորվում և զարգանում է կոռեկտ կարողությունը,
- ապահովում է քիմիայի գործնական-կիրառական կողմը,
- զարգանում է ինքնաստուգման և ինքնակրթության գործընթացը:

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով եւ անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացը: Այն ինչ մի ժամանակ թվում էր հավերժական ու անփոփոխ, այսօր միայն հարաբերական է կամ նույնիսկ ամբողջությամբ՝ սխալ: Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ: Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման խնդիրը մտահոգում է աշխարհի գրեթե բոլոր երկրների-մասկավարժներին, ովքեր իրավացիորեն այս հիմնախնդրի լուծումը որոնում են հոգեբանության, ինֆորմատիկայի ճանաչողական գործունեության կառավարման տեսության ժամանակակից նվաճումները դպրոց բերելու, կրտսեր դպրոցից սկսած՝ երեխաների ուսումնառությունը դրանց հիմման վրա կառուցելու մեջ:

Արդեն նկատելի են առաջին փոփոխությունները: Գրեթե ամբողջությամբ անցում է կատարվել ուսուցման և դաստիարակության մարդասիրական եղանակներին: Ավտորիտար ավանդական ուսուցումն իր տեղը զիջել կամ աստիճանաբար զիջում է համագործակցային և փոխներգործուն ուսուցմանը, ֆրոնտալ մոտեցումը փոխարինվել է աշխատանքի անհատական եղանակներով: Եվ այդուհանդերձ որոշակի հակասություն գոյություն ունի դրանց միջև, իսկ առանձին դեպքերում նշանակալի չափերի է հասնում: Որի՞ն տալ նախապատվությունը՝ բացատրական-ցուցադրական մեթոդների՞ն, երբ ուսուցիչը հանգամանորեն բացատրում է դասը, պատկերավոր կերպով ցույց տալիս դրա կիրառման օրինակները, ապա կրկնում տարբեր ձևակերպումներով, որպեսզի աշակերտները դրությամբ ընկալեն նյութը,

թե՛ կառուցողական մեթոդներին, երբ աշակերտները իրենք են քայլ առ քայլ կառուցում իրենց գիտելիքը՝ սխալվելով ու փորձարկելով, համատեղ քննարկելով ու եզրահանգումներ կատարելով: Իսկ ինչպե՛ս համատեղել ուսումնառության տարբերակման ու բովանդակության և տեխնոլոգիաների միասնականության սկզբունքները: Այստեղ է, որ օգնության են գալիս մանկավարժական նորագույն տեխնոլոգիաները:

Դպրոցում ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը կարևոր պայման է ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման, անձնակենտրոնության ապահովման համար:

Աշակերտին հարկավոր է սովորեցնել ապրելու իր նմանների միջավայրում և ոչ միայն ֆիզիկապես գոյատևել, այլև լավ ու հարմար զգալ մարդկանց մեջ, զարգանալ ու կատարելագործվել: Իսկ դրա համար հարկավոր է.

- ❖ գիտակցի սեփական քայլերը գնահատելու անհրաժեշտությունը, ցուցաբերի հանդուրժողականություն, պատասխանատվություն, պարտաճանաչություն:
- ❖ Կարևորի համագործակցությունը, հանդուրժողականությունը, ստեղծագործական մոտեցումը, ցանկացած իրավիճակում արագ կողմնորոշվելու կարողությունը:
- ❖ Գիտակցի մտքերը հստակ ձևակերպելու անհրաժեշտությունը, այլոց մտքերն ու գաղափարները, կարծիքները գնահատելու կարևորությունը:
- ❖ Գիտակցի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների անհրաժեշտությունը արդի պայմաններում:

**ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԻԴԱԿՏԻԿԱԿԱՆ ՆՈՐ
ՀԱՄԱԿԱՐԳ**

20-րդ դարի կեսերին մանկավարժ գիտնականները և հոգեբանները հայտնագործեցին ուսուցման գործընթացի կազմակերպման դիդակտիկական նոր համակարգեր, որոնք ընձեռեցին ուսուցման գործընթացն ակտիվացնելու, նրա արդյունավետությունը բարձրացնելու, սովորողների ինքնուրույնությունն ու ստեղծագործական ընդունակությունները զարգացնելու հնարավորություն:

Այդ նոր համակարգերի շարքին է դասվում պրոբլեմային ուսուցումը: Պրոբլեմային է կոչվում այն ուսուցումը, որի ընթացքում աշակերտները, ուսուցչի ղեկավարությամբ, իրենց ունեցած գիտելիքների հիման վրա լուծում են պրոբլեմային խնդիրներ, հաղթահարում պրոբլեմային իրավիճակներ, որոնում գործողության նոր եղանակներ, կարգավորում ու կողմնորոշում իրենց գործունեությունը, գործադրում պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական կամ էվրիստիկական, հետազոտական մեթոդներ, ինքնուրույնաբար ձևակերպում իրենց մտահանգումներն ու եզրահանգումները, հասնում վերջնական նպատակի:

Պրոբլեմային ուսուցման գերագույն նպատակը սովորողների տրամաբանական մտածողության և ստեղծագործական գործունեության զարգացումն է, որը կարելի է իրականացնել պրոբլեմային խնդիրներ լուծելու, պրոբլեմային իրավիճակներ հաղթահարելու միջոցով: Ուստի իզուր չեն հոգեբաններն ասում՝ պրոբլեմի օրինաչափությունները նաև մտածողության զարգացման օրինաչափություններ են և հակառակը:

Ուսուցման այս ձևն ունի մի շարք առավելություններ.

- ✓ զարգացնում է սովորողների տրամաբանական, դիալեկտիկական մտածողությունը,
- ✓ ուսումնական նյութը դարձնում է ապացուցելի և այլևս ոչ մի կասկած չի հարուցում,
- ✓ ուսուցման գործընթացը դարձնում է հուզական,

- ✓ ընձեռում է միջառարկայական, միջգիտական կապերից օգտվելու հնարավորություն,
- ✓ ձեռք բերված գիտելիքները երկար ժամանակ մտապահվում են,
- ✓ ինտենսիվացնում է ուսուցումը և արագացնում նրա տեմպը, ինչպես նաև մեծացնում է աշակերտների ինքնագործունեության շրջանակը, լայնացնում նրանց որոնողական՝ հետազոտական աշխատանքներ կատարելու ոլորտը, ծանոթացնում գիտական մեթոդներին:

ՊՐՈՒԸԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

20-րդ դարի 50-ական թվականներին պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան քննարկել են Մ.Ա.Դանիլովը, Վ.Պ.Եսիպովը: Դիտարկելով այն փաստը, որ պրոբլեմային ուսուցումը ակտիվացնում է ուսուցման գործընթացը՝ նրանք առաջադրել են պրոբլեմային ուսուցման կազմակերպման մի քանի դրույթներ.

- Կարևոր է կարծիքների, տեսանկյունների ընդհանրացումը, քննարկումը, քան պատրաստի հասկացությունների, սահմանումների հաղորդումը
- Սովորողներին ծանոթացնել գիտության մեթոդական համակարգին
- Ստեղծագործական առաջադրանքների միջոցով զարգացնել ինքնուրույն մտքեր, եզրահանգումներ արտահայտելու կարողություն:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի նպատակն ուսումնական պարապմունքների այնիպիսի կազմակերպումն է, երբ ստեղծված պրոբլեմային իրավիճակի արդյունքում խթանվում է աշակերտների ինքնուրույն ակտիվ գործունեությունը՝ ծագած խնդիրների լուծման ուղղությամբ: Արդյունքում տեղի է ունենում գիտելիքների, կարողությունների և հմտությունների տիրապետում և մտածական ընդունակությունների զարգացում:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ուսուցման գործընթացում աշակերտների զարգացման ինքնատիպ համակարգ է, որի հիմքում դրված է ուսումնական խնդիրների հաճախակի և նպատակային առաջադրումը դասավանդման

գործընթացում և աշակերտների ակտիվ ներգրավումն այդ խնդիրների լուծման աշխատանքներին:

Այս տեխնոլոգիայի արդյունավետ կիրառման նպատակով դասագործընթացում օգտագործվում են մատուցվող նյութի խնդրահարույց շարադրման և որոնողական էվրիստիկ գրույցի մեթոդը: Խնդրահարույց դասը կրում է հետազոտական բնույթ: Այսպիսի դասը հնարավորություն է ընձեռնում աշակերտներին ներգրավելու ակտիվ իմացական գործընթացում: Այստեղ փոփոխվում է նաև ուսուցչի դերը: Նա դառնում է օգնական, խորհրդատու, դիտորդ, տեղեկատվության աղբյուր, կանոնակարգող:

Նպատակային կողմնորոշիչներն են՝

- ուսուցչի կողմից պրոբլեմային իրավիճակների ստեղծումը,
- աշակերտների ակտիվ իմացական գործունեության խթանումը,
- սովորողների ինքնուրույնության զարգացումը,
- դպրոցականների ստեղծագործական մտածողության ակտիվացումը,
- նրանց մտածողական ընդունակությունների ձևավորումը,
- ուսումնական խնդիրների լուծումը

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Պրոբլեմային է կոչվում այն ուսուցումը, որի ընթացքում աշակերտները, ուսուցչի ղեկավարությամբ, իրենց ունեցած գիտելիքների հիման վրա լուծում են պրոբլեմային խնդիրներ, հաղթահարում պրոբլեմային իրավիճակներ, որոնում գործողության նոր եղանակներ, կարգավորում ու կողմնորոշում իրենց գործունեությունը, գործադրում պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական կամ էվրիստիկական, հետազոտական մեթոդներ, ինքնուրույնաբար ձևակերպում իրենց մտահանգումներն ու եզրահանգումները, հասնում վերջնական նպատակի:

Պրոբլեմային ուսուցման դասավանդման շրջանակներում ուսուցչի դերը իրական խնդիրներ առաջադրելն է, աշակերտի հետազոտությանն աջակցելը և նրա

ուսումնասիրությունը քաջալերելը: Պրոբլեմային ուսուցման մեթոդի մոդելը հայտնի է նաև այլ անվանումներով, օրինակ՝ նախագծի վրա հիմնված դասավանդում, իսկական ուսումնառության կամ խարսխված ուսումնառություն:

Պրոբլեմային ուսուցման գերագույն նպատակը սովորողների տրամաբանական մտածողության և ստեղծագործական գործունեության զարգացումն է, որը կարելի է իրականացնել պրոբլեմային խնդիրներ լուծելու, պրոբլեմային իրավիճակներ հաղթահարելու միջոցով:

Պրոբլեմային ուսուցման էությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է, որն արթնացնում ու ակտիվացնում է սովորողների մտածական գործունեությունը: Ուսուցման այս ձևն ունի մի շարք առավելություններ.

- ✓ զարգացնում է սովորողների տրամաբանական, դիալեկտիկական մտածողությունը,
- ✓ ուսումնական նյութը դարձնում է ապացուցելի և այլևս ոչ մի կասկած չի հարուցում,
- ✓ ուսուցման գործընթացը դարձնում է հուզական,
- ✓ ընձեռնում է միջառարկայական, միջգիտական կապերից օգտվելու հնարավորություն,
- ✓ ձեռք բերված գիտելիքները երկար ժամանակ մտապահվում են,
- ✓ ինտենսիվացնում է ուսուցումը և արագացնում նրա տեմպը, ինչպես նաև մեծացնում է աշակերտների ինքնագործունեության շրջանակը, լայնացնում նրանց որոնողական, հետազոտական աշխատանքներ կատարելու ոլորտը, ծանոթացնում գիտական մեթոդներին:

Պրոբլեմային դասավանդման մտավոր ակունքները սկիզբ են առել Ջոն Դյուիի աշխատություններից: Դյուիի այն միտքը, որ դպրոցները պետք է լինեն կյանքի իրական խնդիրների լուծումներ փնտրող լաբորատորիաներ, պրոբլեմային դասավանդման փիլիսոփայական հիմնաքարն է: Պրոբլեմային ուսուցման ժամանակակից մոդելը հենված է կառուցողականության հայեցակարգի վրա, որի մշակման գործում մեծ ներդրում ունեն եվրոպացի հոգեբաններ Ժան Պիաժեն և Լև Վիգոտսկին:

Պիաժեն գտնում է, որ օրինակելի մանկավարժությունը երեխային պետք է ներգրավի այնպիսի իրավիճակում, որտեղ նա, բառիս ամենալայն իմաստով, ինքնուրույն փորձեր, կանխագծումներ ու եզրահանգումներ կատարի, հմտորեն բանեցնի առարակներ ու տարբերակի խորհրդանիշներն, հարցումներ անի, ինքնուրույն պատասխաններ փնտրի, բացահայտի այլընտրանքային լուծման տարբերակներ, իր դիտարկումների արդյունքը բաղդատի մյուսների արդյունքների հետ:

Ըստ Վիգոտսկու՝ սովորողներն ունեն գարգացման երկու տարբեր աստիճաններ՝ գարգացման իրական աստիճան և հնարավոր գարգացման աստիճան: Իրական ու հնարավոր գարգացման աստիճանների միջև ընկած գոտին Վիգոտսկին անվանել է մտավոր գարգացմա գոտի:

Ռուս հոգեբան Լև Վիգոտսկին ևս, ինչպես Պիաժեն, հավատացած էր, որ մտավոր կարողությունները (ինտելեկտը) զարգանում են, երբ անհայտը հայտնվում է նոր և շփոթեցնող իրավիճակներում և ճզնում է հարթել փորձի հակասությունները:

Ըմբռնելու համար անհատը նոր գիտելիքը շաղկապում է հնին և նոր իմաստ կերտում:

Ի ամփոփում վերոնշյալի՝ պրոբլեմային ուսուցման դեպքում ուսուցիչը քաջակերում է աշակերտի ակտիվ մասնակցությունը, աշակերտներին մղում է իր գիտելիքների պաշարի ինքնուրույն հայտնաբերմանը կամ կերտմանը: Աշակերտներին աշխարհի մասին գաղափարներ կամ տեսություններ մատուցելու փոխարեն, ինչն անում է ուղղակի դասավանդման մոդելով առաջնորդվող ուսուցիչը, պրոբլեմային ուսուցման դեպքում նա հարցադրման կամ պրոբլեմային ուսումնառության մոտեցումների կիրառման միջոցով աշակերտներին հնարավորություն է տալիս ինքնուրույն կառուցել սեփական գաղափարներն ու տեսությունները:

ՊՐՈՒԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացություններից են՝ ուսումնական պրոբլեմը (կամ ուղղակի պրոբլեմային խնդիրը), պրոբլեմային հարցը և պրոբլեմային իրավիճակը:

Ուսուցման գործընթացում պրոբլեմային խնդիրը իրագործում է որոնելի անհայտի բացահայտման ֆունկցիա: Սովորական խնդիրը և պրոբլեմային խնդիրը տարբեր հասկացություններ են: Պրոբլեմային խնդիրը ներառում է ենթապրոբլեմներ, պրոբլեմային հարցեր, առաջացնում շղթայական իրավիճակներ: Մինչդեռ սովորական խնդիրը գուրկ է այդպիսի հատկություններից:

Պրոբլեմային խնդիր հասկացությունը կարելի է ձևակերպել այսպես. պրոբլեմային խնդիրը որոնելն անհայտից բխող ենթապրոբլեմների և պրոբլեմային հարցերի համակցություն է, դրանց ամբողջականությունը կամ միագումարությունը, որ առաջացնում է պրոբլեմային իրավիճակներ:

Պրոբլեմային հարց. պրոբլեմային է կոչվում այն հարցը, որն առաջացնում է ճանաչողական դժվարություն:

Պրոբլեմային իրավիճակը պրոբլեմային ուսուցման կենտրոնական օղակն է: Այն աշակերտների համար ստեղծված հոգեկան լարված պահն է, որը լի է հակասություններով:

Երբ աշակերտին առաջադրվում է պրոբլեմային խնդիր, նա առաջին հերթին մտածում է գտնել գործողության նոր եղանակներ, համախմբում է իր ունեցած գիտելիքները, կարողությունները, դատում է, տրամաբանում, առաջադրում վարկածներ և այլն: Այս ամենը նրան հարկադրում է ստեղծված պրոբլեմային իրավիճակը: Ուստի իզուր չէր Ս. Լ. Ռուբինշտեյնն ասում, որ մտածողության սկիզբը պրոբլեմային իրավիճակի ծագումն է:

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԳԾԵՐ

Խթանող հարց կամ խնդիր. Պրոբլեմային ուսուցումը ուսուցման գործընթացը կազմակերպում է հասարակությանը հուզող և աշակերտների համար անձնապես իմաստալից հարցերի և խնդիրների շուրջ: Դրանք արտացոլվում են իրական կյանքի այնպիսի իրավիճակներ, որոնք պարզ պատասխանով չեն լուծվում, այլև կան հանգուցալուծման մրցակցող տարբերակներ:

Միջառարկայական կենտրոնացում. Չնայած պրոբլեմային դասը կարող է կենտրոնացած լինել որոշակի առարկայի շրջանակներում, հետազոտվող իրական խնդիրն ընտրվում է հենց այն պատճառով, որ դրա հանգուցալուծման համար աշակերտը ստիպված լինի խորասուզվել բազմաթիվ առարկաների ոլորտներում:

Իրական հետազոտություն. Պրոբլեմային ուսուցումը աշակերտից պահանջում է հետամուտ լինել իրական խնդիրների իրական լուծումների հայտնաբերմանը նպատակաուղղված իրական հետազոտության: Նրանք պետք է վերլուծեն և սահմանեն խնդիրը, մշակեն վարկածներ և կանխատեսումներ անեն, տեղեկություններ հավաքեն և քննարկեն, անհրաժեշտության դեպքում փորձեր կատարեն, հետևություններ ու եզրահանգումներ անեն:

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Պրոբլեմային ուսուցումը կատարում է զարգացնող և դաստիարակչական ֆունկցիաներ:

Զարգացնող ֆունկցիաները բազմազան են: Այսպես, օրինակ, մոդելավորվում է աշակերտների մտածողությունը, բարձրացնում նրա արդյունավետությունը: Ուսումնական առարկաների տրամաբանությունը մոտեցնում է գիտությունների տրամաբանությանը, իսկ ուսուցման տրամաբանությունը՝ ճանաչողական տրամաբանությանը: Կազմակերպում է սովորողների խմբային մտավոր աշխատանքը, ապահովում է նրանց մտածողության դիալեկտիկական զարգացումը, իրացնում է գիտելիքների փոխանցումը նոր իրավիճակներում:

Դաստիարակչական ֆունկցիաներ: Պրոբլեմային ուսուցումը ունի հատուկ դաստիարակչական ֆունկցիաներ: Դրանցից են՝ սովորողների ստեղծագործական հմտությունների դաստիարակումը, ձեռք բերած գիտելիքների ստեղծագործաբար օգտագործումը, ստղծագործական փորձի կուտակումը և այլն:

Պրոբլեմային ուսուցումն օգնում է աշակերտին դառնալ անկախ և ինքնուրույն սովորողներ:

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Ժամանակակից դիդակտիկայում գործադրվում են պրոբլեմային ուսուցման երեք մակարդակներ:

Առաջին մակարդակի դեպքում ուսուցիչն առաջադրում է պրոբլեմը, ձևակերպում է այն և աշակերտներին ուղղում դեպի լուծման ուղիների ինքնուրույն որոնումները:

Երկրորդ մակարդակը առաջինից տարբերվում է նրանով, որ աշակերտի մեջ դաստիարակվում է պրոբլեմը ինքնուրույնաբար ձևակերպելու և լուծելու ընդունակություն, իսկ ուսուցիչը միայն նշում է պրոբլեմը:

Երրորդ մակարդակում ուսուցիչը նույնիսկ չի նշում պրոբլեմը: Աշակերտը այն պետք է տեսնի տեքստում ինքնուրույնաբար, ձևակերպի և հետազոտի նրա լուծման հնարավորությունները և եղանակները: «Այս ամենի արդյունքը լինում է այն,- գրում է հոգեբան Վ. Ա. Կրուտեցկին,- որ աշակերտի մեջ դաստիարակվում է պրոբլեմը ինքնուրույնաբար տեսնելու, պրոբլեմային իրավիճակն ինքնուրույնաբար վերլուծելու և ինքնուրույնաբար ճիշտ պատասխան տալու ընդունակություն»: Այսպիսով, երրորդ մակարդակում աշակերտի գործունեությունը լրիվ ինքնուրույն է:

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ԴԱՍԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Նպատակները. Վերևում բացատրվել է, որ պրոբլեմային ուսուցումը հետապնդում է այնպիսի նպատակներ, ինչպիսին են՝ աշակերտներին օգնել զարգացնելու իրենց մտավոր և հետազոտական հմտությունները, դառնալու ինքնուրույն սովորողներ: Պրոբլեմային դասավանդման մոդելի հիման վրա կառուցված որոշ դասեր կարող են այս բոլոր նպատակները համատեղել: Բայց նայնպես, առավել իրատեսական է, որ ուսուցիչը որոշակի դասաշար նպատակաուղղի վերոնշյալներից մեկ երկուսին:

Պրոբլեմային ուսուցման մոդելով առաջնորդվող ուսուցիչները գործուն մասնակցություն են ունենում աշակերտների հետազոտության խնդիր ընտրելու հարցում, քանի որ սա աշակերտներին ավելի է ոգևորում:

Օրինակելի իրավիճակն առնվազն պետք է բավարարի հետևյալ հինգ չափանիշների.

- ✓ Պետք է լինի իրական: Սա նշանակում է, որ խնդիրը պետք է խարսխված լինի ոչ թե գիտության տվյալ ճյուղի սկզբունքներին, այլ աշակերտի իրական կենսափորձին:
- ✓ Խնդիրը պետք է որոշ չափով ոչ հստակ ձևակերպում ունենա, որպեսզի իր խորհրդավորությամբ ու խճճվածությամբ գրավի աշակերտին:
- ✓ Խնդիրը պետք է իմաստալից լինի և համապատասխանի աշակերտների մտավոր զարգացման մակարդակին:
- ✓ Խնդիրը պետք է բավարար չափով ընդգրկուն լինի, որպեսզի ուսուցիչը հնարավորություն ունենա իրագործել իր ուսուցողական նպատակը:
- ✓ Ցանկալի է, որ օրինակելի խնդրի լուծումը խմբային աշխատանք ներառի:

Խնդրի ընտրությունը կատարելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի հետևյալ նկատառումները.

- ✓ Արդյո՞ք այդ իրավիճակը հետաքրքիր կլինի աշակերտների տվյալ խմբի համար:

✓ Այս խնդրի հետազոտումն իրագործելի՞ է, և արդյո՞ք հատկացված ժամանակն ու նյութատեխնիկական առկա պաշարներն արդյունավետ հետազոտություն վարելու հնարավորություն են ընձեռում:

Քիմիայի ծրագրերում քիմիայի հիմնական դասընթացը դիտարկվում է էկոլոգիական պրոբլեմների տեսանկյունից: Էկոլոգիական հարցեր շոշափվում են քիմիայի ծրագրի յուրաքանչյուր կառուցահատվածում, այսպես, «Ոչ մետաղներ» կառուցահատվածում էկոլոգիական պրոբլեմները կապված են հանքային պարարտանյութերի օգտագործման հետ (նիտրատային աղետ), «Մետաղներ» կառուցահատվածում ծանր մետաղների օրգանիզմի վրա ունեցած թունավոր ազդեցության, շրջակա միջավայրը ծանր մետաղներով աղտոտման աղբյուրների հետ, «Թթվածինը և օդը» կառուցահատվածում էկոլոգիական պրոբլեմները կապված են օզոնային շերտի պաշտպանիչ դերի, օդի աղտոտման պրոբլեմի, մթնոլորտային օդի պահպանման հետ:

Այս պարագայում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքների հաղորդումը, այլև դրանք առաջարկվում են որպես պրոբլեմ, որի լուծմանը ընդգրկվում են սովորողները: Ուսուցման այս տեխնոլոգիայի կիրառման արդյունքում սովորողները ստանում են գիտական գիտելիքներ, ձևավորում են համապատասխան կարողություններ ու հմտություններ, զարգացնում են ճանաչողական ակտիվությունը, հետաքրքրասիրությունը, ստեղծագործական մտածողությունը և այլ արժեքավոր անձնային որակներ: «Քիմիայի դասընթացի շրջանակներում ուսուցիչը կարող է ստեղծել պրոբլեմային իրավիճակ: VIII դասարանում դասի թեման էր «Մթնոլորտ: Օդի բաղադրությունը»:

Մենք ապրում ենք *մթնոլորտ* անվանվող հսկայական օդային օվկիանոսի հատակին: Մթնոլորտը Երկիր մոլորակի օդային թաղանթն է՝ յուրօրինակ մուշտակը: Օդը կանխում է Երկրի մակերևույթի գերտաքացումն Արևից և միաժամանակ՝ պահպանում վերջինիս ջերմությունը տարածության մեջ ցրվելուց: Մթնոլորտը մեր մոլորակի հուսալի պաշտպանն է երկնաքարերից՝ «ընկնող աստղերից», որոնք օդում շիկանում են ու այրվում: Մթնոլորտը պաշտպանում է Երկիր մոլորակի բուսական ու կենդանական աշխարհը տիեզերական ճառագայթների կործանարար ազդեցությունից:

Առանց օդի՝ գրեթե բոլոր կենդանի օրգանիզմները չեն կարող գոյություն ունենալ: Մարդը կամքի ուժով կարող է շունչը պահել ընդամենը մի քանի վայրկյան: Զուր չէ, որ այս կամ այն՝ հույժ կարևոր առարկան ակնարկելիս հիշում ենք ասացվածքը. «Դա օդի պես անհրաժեշտ է»: Տրամաբանական է, որ օդային ավազանի պահպանությունը չափազանց կարևոր է:

Հայտնի է, որ օդն ունի զարմանալի հաստատուն բաղադրություն, որը պահպանվում է բնական փոխանակության ճանապարհով: Թարմ օդը, որը երբեմն հաջողվում է ընթռշխնել սարերում, անտառում, ծովափին և ւայլուր, սովորական օդից բավականին քիչ է տարբերվում: Երկիր մոլորակի մթնոլորտում թթվածինը մոտ **21 %** է (ըստ ծավալի): Այրման համար դա միանգամայն բավարար է:

Ներկայացնենք դաս, որտեղ ուսուցիչը կարող է առաջարկել որևէ պրոբլեմային իրավիճակ: Նախքան ուսումնական նյութ հաղորդելը ուսուցիչը առաջարկում է սովորողներին պրոբլեմային հարց, որի օգնությամբ խթանում է նրանց հետաքրքրասիրությունը, նրանց մղում որոնողական գործողության, տալիս հնարավորություն ինքնուրույն լուծելու:

Պրոբլեմային իրավիճակ 1. Տրվում է հարց ի՞նչ տեղի կունենար, եթե թթվածնի պարունակությունն օդում **19%-ից** ցածր լիներ: 8-րդ դասարանում դասի թեման էր «Մթնոլորտ, օդի բաղադրությունը»: Դասին մասնակցում էին 31 սովորող:

Ստեղծված պրոբլեմային իրավիճակում աշակերտները բանավիճում են: Տասը պնդում էին, որ թթվածնի 19% դեպքում կենդանիները և մարդիկ շնչահեղձ կլինեին: 13 աշակերտ այն կարծիքին էին, թե այրումը դանդաղ կընթանար: Կային աշակերտներ, որ չէին մասնակցում, միայն հետևում էին: Երկար քննարկումից հետո վերջապես եկան մեկ եզրակացության և տվեցին պատասխանը. եթե օդը **19 %**-ից ցածր քանակությամբ թթվածին պարունակեր, ապա այդպիսի օդում ածխածնի այրումն անհնար կլիներ, չէր այրվի, և «բնական» կրակը երբեք չէր հայտնվի:

Պրոբլեմային իրավիճակ 2. Ի՞նչ կլիներ, եթե թթվածնի պարունակությունը մթնոլորտում **29%-ից** բարձր լիներ:

Ստեղծվում է երկրորդ պրոբլեմային իրավիճակը: Աշակերտները բուռն քննարկում էին, բանավիճում, բարձրաձայն ժխտում են ու հաստատում, վիճում ու

համաձայնվում: Իմ ակտիվ մասնակցությունն էր բանավեճին, որը ոգևորում էր աշակերտներին: Վերջապես, երկար մտորումներից հետո գալիս են համաձայնության և ձևավորվում ճիշտ պատասխանը. եթե թթվածնի պարունակությունը մթնոլորտում **29%**-ից բարձր լիներ, ապա այդ դեպքում գազային միջավայրում կայծակի մեկ հարվածից հսկայական հրդեհներ և նույնիսկ պայթյուններ կառաջանային:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը այս դասընթացի շրջանակներում նպաստում է աշակերտների մտավոր զարգացմանը, ակտիվացնում է ուսուցման գործընթացը, ձևավորում հետաքրքրություն ուսումնասիրվող նյութի նկատմամբ:

Եզրակացություն

Ինչպես նկատեցինք, պրոբլեմային իրավիճակների ստեղծումը մեծապես կախված է ուսուցչից: Հենց նրա օգնությամբ է երեխան կարողանում կողմնորոշվել այդպիսի բարդ իրավիճակներում: Պատրաստի մտքերը, գաղափարները աշակերտներին վարժեցնում են մեխանիկական, միօրինակ մտածողության, որն արդյունավետ չէ: Միտքը պետք է մի դատողությունից բխեցնի մի այլ դատողություն և հանգի տրամաբանական եզրակացության: Այս տեսակետից սեփական մտահանգումները դատողության և ինքնուրույն եզրակացության լայն հնարավորություն են տալիս:

Մտահանգումները ուսուցման մեջ ունեն վճռական նշանակություն: Դրանց շնորհիվ մտածողական նոր խնդիրները աշակերտին չեն ներկայանում որպես անսովոր երևույթ: Նախորդ խնդիրների պայմաններից ելնելով՝ նա առաջադրում է նորերը: Ոչ ճիշտ մտահանգումները աշակերտի գործունեությանը կարող են սխալ ընթացք տալ և շեղել նպատակից:

Պրոբլեմային ուսուցումը հետապնդում է այնպիսի նպատակներ, ինչպիսիք են՝ աշակերտներին օգնել զարգացնելու իրենց մտավոր և հետազոտական հմտությունները, դառնալու ինքնուրույն սովորողներ: Պրոբլեմային դասավանդման մոդելի հիման վրա կառուցված որոշ դասեր կարող են այս բոլոր նպատակները համատեղել: Բայց և այնպես, առավել իրատեսական է, որ ուսուցիչը որոշակի դասաշար նպատակաուղղի վերոնշյալներից մեկ-երկուսին:

Այս աշխատանքում ներկայացրել և ուսումնասիրել են պրոբլեմային ուսուցումը որպես գործընթացի կազմակերպման դիդակտիկական նոր համակարգ: Առաջարկում են դասերի ընթացքում հաճախակի ստեղծել պրոբլեմային իրավիճակներ և թողնել, որ սովորողները իրենք կողմնորոշվեն այդ իրավիճակներում և գտնեն լուծումներ՝ զարգացնելով տրամաբանական մտածողությունը:

Գրականության ցանկ

1.Նախաշավիղ 2009

2.Նախաշավիղ 2011

3.Ամիրջանյան <<Պրորլենային ուսուցում>>

<https://chairoflogicphiloscult.files.wordpress.com/2013/03/dasaxosutjan-textst2.pdf>

4.Քիմիա-8 դասընթացի դասագիրքը, հեղինակներ Լ. Ա. Սահակյան, Ք. Հ. Բոյսյան

5.Унт И.Э. Индивидуализация и дифференциация обучения. М. Педагогика- 1990.

6. Վարդանյա ն Ս., Սահակյա ն Լ. , Մանուկյա ն Շ., Սահակյան Քիմիական կրթության բնա պահպանական ուղղվածության ապահովումը ուսումնական մոդուլների օգնությամբ: Հայաստանի Էկոլոգիական հանդես N2, 2002 :